

Մ. ՆԱԼԲԱՆԻՅԱՆԻ ԶԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՏԱՀՂԱՑՈՒՄՆԵՐԸ

Րանասիր. դիտ. դպրոց Պ. Հ. ՀԱՅՈՑԱՆ

Նյութերը, որոնց ըննությանն են նվիրված հետագա տողերը, բոլորն էլ արտագրված են Մ. Նալբանդյանի բնորոշ ձեռագրով և առ այսօր ուշադրության չեն առնվել: Պահվում են Գրականության և արվեստի թանգարանում, Մ. Նալբանդյանի թողոններում, № 23—1(23) թղթածրարում: Թեպետև վերջինիս մեջ այժմ ամփոփված են տարբեր մեծության շորս թերթիկ, բայց մեր ուսումնասիրության առարկան դրանցից միայն կրեքն են:

Թևրթիկ Ա. չափսը՝ 11,1(11,3)×17.7: Առաջին էջը պարունակում է 20 մատիտագիր տող, բոլորն էլ հույժ դժվարընթեռնելի, որոնք, ըստ ներքին բովանդակության, տրոհվում են յոթ միավորի: Ստորև արտագրում ենք դրանք նույնությամբ՝ յուրտրանյութ տողից հետո դնելով թեք գիծ (1): Նալբանդյանի քաղած ընագրային միավորների համարակալումը, ըստ առանձին թերթիկների, մերն է:

<1>

Պատմ. Ս. Հռիփսիմեանց
«Որում ոչ դոք կարծեմ ընդդիմալնալ ի միտս ունողացն»։ էջ ա, հմմտիր
Պատմ. 114 եր. վերջին տողերի հետ:

<2>

«Ձի ես մահկանացու գոլով, ծեր և հիւանդոտ, երկուցեալ ոչ հրեշտակ գոլով, կամ /որդի բարձրելոյ, որպէս աստուածայինն ասէ/ բան»:

<3>

«Քաջ բարտուղարն թողեալ Ագաթանգեղոս»:

<4>

«Խաչ դսրոյն Յակովբայ դմածեալն տերունա/կան արեամբն ի կենաց փայտին հատեալ վասն/ խնդրոյն Պատրոնիկեայ տիկնոջ... ի ձեռն/ նմին եղ-
րօր Տեառն»:

<5>

«Ջրակտելիս դայս մարմնոյ» են: Խոր. / Ճառ ի Վարդավառն:

<6>

«Վասն որոյ և մեք ղքակտելիս մեր յարմա/րեսցուք քեզ տաղաւար»:
Շարակ.

<7>

«Ձի ուրանօր վերանստեալն, անդ/և աթոռ նորա»:
Խոր. Ճառ ի Վարդ. (Կրկնվում է նաև Գ թերթիկի երկրորդ էջում, տե՛ս
8-րդ քաղվածք—Պ. Հ.):

Ավելի ուշ, այս նույն էջի վրա, վերին լուսանցքում, արդեն թանաքով
Մ. Նալբանդյանը հավելագրել է մի քաղվածք ևս, այս անգամ այլ աղբյուրից.

<8>

«Իսկ ապա նմա՝ թէ այդպէս է, ի՞բր գոյր չնար զուգիւք զուարճանալ զարմիւք»։ Պիտ. գիրք Գ, օր. ա.

Այս նույն՝ Ա թերթիկի երկրորդ էջի վրա նալբանդանը, թերևս միաժամանակ, արտագրել է Հին կտակարանի մի քանի գրքերի կրճատ խորագրերը. երևի, իր հետազոտական աշխատանքների ընթացքում միասնական ձևով նշելու համար։ Մեջ ենք բերում նաև այդ անտիպ պատառիկը՝ համառոտագրութունների կողքին, փակագծերի մեջ, բաց անելով համապատասխան գրքերի լրիվ վերնագրերը.

Մն. (= Մնունդք)

Ելք

Ղևտ. (= Ղևտական)

Թիւք

Ե օր. (= Երկրորդումն օրինաց)

Յեսուա. (= Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ)

Դատ. (= Դատաւորք)

Ա թագ. (= Թագաւորութեանց Առաջին)

Բ թագ. (= Թագաւորութեանց Երկրորդ)

Գ թագ. (= Թագաւորութեանց Երրորդ)

Դ թագ. (= Թագաւորութեանց Չորրորդ)

Այստեղ հիշվածներն են Մովսեսի Հնգամատյանը ու ևս ուրիշ վեց գիրք։ Այսքանով ավարտվում է Ա թերթիկի պարունակութիւնը։

Թերթիկ Բ. չափսը՝ 11,3 (11,5)×17,7. օգտագործված է միայն առաջին էջը, որ բաղկացած է դարձյալ 20 մատիտագիր տողից, որոնք իրենց ներքին բովանդակութեամբ բաժանվում են 12 միավորի։ Ահա՛ դրանք ըստ հերթականութեան.

<1>

«Զհայրաբուն փառացն էական / ճառագայթ անդանօր փայլեցոյց»։ / Նոյն։ /

<2>

«զհայրենին փայլեաց զփառս»։ /
Շար. /

<3>

«առաքաստի ասել երգս»։ Խոր. Պատ. / գիրք Գ, գլ. վշ (= վերջին՝ — Պ. Ա.)։

<4>

«Առաքաստի երգեն զերգս»։ Նոր. ի վարդ.

<5>

«Զլուծանելի մարմնոյս տաղաւար / մաքրութեան առնել խորան»։ Նոյն ի նոյն.

<6>

Պարիդօտիցի [՞]։

<7>

«Անձանձրոյթ յորդորմամբ»։ Պիտ. օր. Բ, 346 եր.

<8>

«Աստուածային բարեպաշտութեանցն յորդորունքս! Պիտ. օր. 5, եր. 354.

<9>

Աճեցմունս Պարխառ լերին:

<10>

«Ի բոլոր բարեացն յորդորմունս». Պիտ. գիրք! է, օր. ա, եր. 479.

<11>

«Կամենայն յարեացն յորդորմունս վաղվաղակի՝ ժամանել». գիրք է, օր. 5, եր. 502.

<12>

ՏԼՆՍ Նարեկ, եր. 378, անդեղջ ևն:

Իբր «Մատյան ողբերգության» (սնարեկ) պոեմից քաղված այս վերջին բառը, ալիկի ճիշտ՝ այս վերջին հղումը, չգիտես ինչու, Նախնական առանձնացրել է նախորդ քաղվածքներից ու նշումներից և նրանց ու այս վերջինի միջև դրել պարզ գծիկ, որը մենք չենք պահում:

Անցնենք Գ թևթիկի պարունակությանը. Զափսր՝ 8,3(8,4)×20,9: Առաջին էջը գրված է բացառապես թանաքով, պարունակում է ընդամենը 28 տող, ըստ որում՝ 6-րդ և 13-րդ տողերից (1 և 4 հատվածներից) հետո, հետագայում, արված են մատիտագիր լրացումներ, որոնք երկուսն էլ, իբր, կարճ քաղվածքներ են «Նարեկից», իսկ 13-րդ տողը հետագայում ջնջված է: Մենք այդ տողը վերականգնում ենք ուղիղ փակագծերի մեջ: Այսպիսով Գ թևթիկի առաջին էջը պարունակում է 27 հիմնական, 4 լրացուցիչ և մեկ ջնջված տող, ընդամենը՝ 32, որոնք քաղվածքներ են տարբեր սկզբնաղբյուրներից և տրոհվում են ընագրային տասը միավորի:

<1>

«Թերես արժանի լինիցիմք ընդունելով ի հոգւոյն բան իմաստութեան/ մասնաւորաբար զերանկւոյ/ հօրն պատմել զառաքինութիւն»: Յովհ.՝ Ոսկերիսի, Ներսիս, Ներսիս, Ա,՝ Անդէն [իսկ] ի ներածութեանն իսկ:

<2>

Խորեկ, եր. 424. «...ծոնեսչիք ևրգոյս բանի/ շնորհ» ևն:

<3>

«Արդ շնորհեսցէ մարդասէրն/ Աստուած պարգևս, բան՝ ինձ ասողիս/ և ձեզ լսողացդ, մտադիրութեամբ/ ունկնդրութիւն»: Ճառ ի մարտիրոսութիւն Աստուծանց զօրավարաց / յաւուրս Յազկերտի Բ-ի:

<4>

[ՏԼՆՍ և Բարձրացուցէքը]

<5>

«Բան ինձ շնորհեա» ևն, Նարեկ, եր.՝ 220:

<6>

«Հասանէր վախճան սրբոյ վարդապետին Հայոց յԱյրարատ/ գաւառի ի Նոր քաղաքի»: Կորիւն:

<7>

«Թերևս ի նմանէ (ի Շնորհալույ) : արժանացեալ առնուցումք զշնորհս/ բանի և իմաստութիւն»։ Պատմ. վար. ս. ներս. Շնորհ. հր. 10։

<8>

«Աղաչեա՛ զԱստուած, բանալ զբեկրանդ և բարբառել զայն,՝ զոք սիրէ Աստուած»։ Խրատ Թաթլոյլ առ աշակերտ իւր Թովմաս չայր/ վանաց։

<9>

Տե՛ս նույն բանի 11 և 12 երեսները։

<10>

«Ո՛չ գոյր նմա տուն չանգստեան»

Պատմ. վար. ս. ներ. Շնորհ. հր. 20։

Գ քերթիկի երկրորդ էջը պարունակում է 32 տող՝ տրոչված տասը միավորի, որոնք արտադրված են միաժամանակ թանաքով և մատիտով (Ն՝ 3,8—10), հետևյալ հաջորդականությամբ.

<1>

«Տո՛ւր և ինձ, Տէր, բան ի բանալ/ բերանոյ իմոյ»։ Պատմ. ս. Սարգսի ղօրավ. ուղղագրեալ ի Շնորհալույ,՝ հր. 40։

<2>

«Զի և ինձ տացի բան ի բանալ/ բերանոյ իմոյ»։ Սիսիանոսի/ [հպիսկոպոսի] վարդապետի ճառ ի սուրբ Քառասունսն,՝ հր. 9։

<3>

Զի և շնորհքն Աստուծոյ անզեղչք ևն»/

Նոյն, հր. 57 (Այս վկայությանը հետագա լրացում է, մատիտով—Պ. Ն.)։

<4>

«Զի հս տաց ձեզ բան և իմաստութիւն։ Ղուկ. ԻԱ, 14

<5>

«Զի տացի ձեզ ի ժամուն յայն/միկ զինչ խօսիցիք։ Զի ո՛չ եթէ՛ դուք իցէք որ խօսիցիքն, այլ/ հոգին Հօր ձերոյ, որ խօսիցի/ ի ձեզ»։ Մատթ. Ժ, 20—21։

<6>

«Որ ինչ տացի ձեզ ի ժամուն/ յայն/միկ, զայն խօսիցիք, զի ո՛չ՛ դուք էք, որ խօսիցիքն, այլ/ Հոգին սուրբ»։ Մարկ. ԺԳ, 11։

<7>

«Եւ զմայր եկեղեցեացն ի թա/գաւորաբնակ և յարքայանիստ վա/ղարշապատ քաղաքի»։ Խոր. Աշխարհադր (Գրված է սղագիր նշանով՝ ~ հգր—Պ. Ն.) / Այրարատոյ։

<8>

«Զի ուրանոր վերանստեալն/ անդ և աթոռ նորա»։ Խորեն. ի ճառ/ վարդապետի։

<9>

«Նաղարշապատ, որ և նոր քաղաքն է՝ խոր. Պտմ. գիրք Բ, գլ. 65:

<10>

Սուրբ Սահակը Իւլթիլիսէ: խոր. գիրք Գ, գլ. 66

Շարկավ, իրենց կուսական վիճակով, ընթերցողի համար դժվարընկալելի պիտի մնան: վերոհիշյալ, թվով քառասուն քաղվածքներն ու հղումները, առավել դժվար որսալի՝ նրանց սկզբնաղբյուրները, հետևաբար նալրանդյանի սույն նշումները հրատարակության պատրաստելիս՝ պահպանելով հանդերձ նրանց հաջորդականությունը, կատարել ենք աննշան շեղումներ և նույն հեղինակից ու երկից առնված օրինակները համախմբել մի տեղում, համապատասխան խորագրի տակ: Այդ բոլոր խորագրերը, բացառությամբ մեկի («Պատմութիւն ս. Հոփսիմեանց»), մեր հավելումներն են, և դրված են սուր փակագծերի մեջ: Անհրաժեշտության դեպքում, նալրանդյանի քաղած որոշ արտահայտութիւնների միտքը սլոյրդ դարձնելու համար, նրա արտագրության մեջ բացակայող առանձին ըստեր ու բառակապակցութիւնները հարմար գտանք լրացնել րստ «գտադործված սկզբնաղբյուրների՝ մեր հավելումները վերստին դնելով սուր փակագծերի մեջ:

Մեզ բերենք նալրանդյանի քաղվածքներին՝ մեր կողմից վերականգնված բնագիրը և հետո նոր անցնենք զրանց բնութայնը:

<ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ>

Պատմութիւն ս<րբոց> Հոփսիմեանց

«Որում ոչ չորս կարծեմ ընդդիմանալ ի միտս ունեղացն», էջ ա: Հմմտի՛ր Պատմ<ութիւն> 14 եր. վերջին տողերի հետ:

«Զի ես մահկանացու գոլով, ծեր և հիւանդոտ, երկուցեալ ոչ հրեշտակ գոլով, կամ որդի բարձրելոյ, որպէս աստուածայինն ասէ բան»:

«...քաջ քարտուղարն թողեալ Ագաթանգեղոս»:

«Խաչ գարոյն Յակովբայ զմածեալն տէրունական արեամբն ի կենաց փայտին հատեալ վասն խնդրոյն Պատրոնիկեայ տիկնոջ, <որ և ինքեան գոլ պահապան> ի ձեռն նմին եղորօր Տեառն»:

<Յաղագս Վարդավառին խորհրդոյ և Շարական («Կանոն Վարդավառին Առաջնոյ ատուր)>

«...Հրակտելիս դայս մարմնոյ <անդամս առաքինութեան յարդարել խորան> ի մեզ, որպես ի տաղաւարս տօնեմք...» ևն:

Խոր<ենացի>, Ճառ ի Վարդավառն

«Վասն որոյ ի մեք դրակտելիս մեր յարմարեացուք քեզ <հոգևորական> տաղաւար»:

Շարակ<ան>

«Զի ուրանօր վերանստեալն, անդ և աթոռ նորա»:

Խոր<ենացի>, Ճառ ի Վարդ<ավառն>

«<Եւ Բանն մարմնացեալ> զհայրաբուն՝ փառացն էական ճառագայթ անդանօր փայլեցոյց»:

նոյն

«...դհայրենին փայլեաց զփառս»:

Շար<ական>

«Զլուծանելի մարմնոյս տաղաւար՝ մաքրութեան առնել խորան»:

նոյն ի նոյն (իմա՝ Ճառ ի Վարդավառն—Պ. Հ.):
Պարիգօտիցի

<Յաղագս Պիտոյից>

«Իսկ ապա նմա՝ թէ այդպէս է, ի՞բր գոյր չնար զուգիւք զուարճանալ զարմիւք»:

Պիտ<ոյից>, գիրք Գ, օր<ինակ> Ա, <եր. 376>:
«Անձանձրոյթ յորդորմամբ...»

Պիտ<ոյից, գիրք Ա,> օր<ինակ> Բ, 346՝ եր.
«...Աստուածային բարեպաշտութեանցն յորդորմունք»:

Պիտ<ոյից, գիրք Ա,> օր<ինակ> 5, եր. 354:
«Ի բոլոր բարեացն յորդորմունս...»:

Պիտ<ոյից>, գիրք է, օր<ինակ> Ա, եր. 479:
«Յամենայն բարեացն յորդորմունս վաղվաղակի ժամանել»:

<Պիտոյից>, գիրք է, օր<ինակ> 5, եր. 502
«Աճեցմունս Պարխառ լերին»:

<Պատմութիւն Հայոց և Աշխարհացոյց>

«Առաքաստի ասել երգս»:

Խոր<ենացի>, Պատ<մութիւն Հայոց>, գիրք Գ, գլ. վերջ. (իմա՝ ԿԸ—Պ. Հ.):

<Հմմտի՛ր. > «Առաքաստի երգեն երգս»:

Նորին, ի Վարդավառն:

«Եւ զմայր եկեղեցեացն ի թագաւորաբնակ և յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի»:

Խոր<ենացի>, Աշխարհագրութիւն Այրարատայ:

<Հմմտի՛ր. > «Զի ուրանոր վերանստեալն, անդ և աթոռ նորա»:

Խորեն<ացի>, ի Ճառ Վարդավառն:

«Վաղարշապատ, որ և նոր քաղաք»:

Խորեն<ացի>, Պատմ<ութիւն Հայոց>, գիրք Բ, գլ. 65:

Սուրբ Սահակը՝ Իւլքիլիսէ:

Խոր<ենացի, Պատմութիւն Հայոց>, գիրք Գ, գլ. 66:

<ԿՈՐՅՈՒՆ>

«Հասանէր վախճան սրբոյ վարդապետին Հայոց յԱյրարատ գավառի, ի նոր քաղաքի»:

Կորիւն <վարդապետի Պատմութիւն սրբոյն Մեսրոպայ>

<ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ>

Տե՛ս Նարեկ, Լր. 378. «Անգեղջ...» են:

Եւրեկ, եր. 424. «Զօնեսջիք երգոյս բանի շնորհ...» են:

«Բան ինձ շնորհեա՛ւք...» են:

Նարեկ, եր. 226:

[Տե՛ս և Բարձրացուցէք:]

<«ՄՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ» ՄԱՏԵՆԱՇԱՐ>

«Թերես արժանի լինիցիմք ընդունելով ի հոգւոյն բան իմաստութեան մասնաւորաբար զերանելոյ հօրն պատմել զառաքինութիւն»:

Յովհ. Ոսկեբերան, Ներբողեան Ա, անդեն. [իսկ] ի ներածութեան իսկ:

«Արդ շնորհեսցէ մարդասէրն Աստուած պարգևս, բան՝ ինձ ասողիս և ձեզ լսողացդ, մտադիրութեամբ ունկնդրութիւնս»:

Ճառ ի մարտիրոսութիւն Աստուծանց զօրավարաց յաւուրս Յազկերտի Բ-ի: «Թերևս ի նմանէ (ի Շնորհալոյ—<Մ. Ն.>) արժանացեալ առնուցումք զշնորհս բանի և իմաստութեան»:

Պատմ<ութիւն> վար<ուց> ս. Ներս<եսի> Շնորհ<ալոյ>, Կր. 10:

«...Ո՛ր դուր նմա տուն հանգստեան»:

Պատմ<ութիւն> վար<ուց> ս. Ներս<եսի> Շնորհ<ալոյ>, Կր. 20:

«<Արդ> տո՛ւր և ինձ, Տեր, բան ի բանալ բերանոյ իմոյ»:

Պատմ<ութիւն> ս. Սարգսի զօրավ<արի> ուղղագրեալ ի Շնորհալոյ, Կր. 40:

«Աղայեա՛ղ ղԱստուած, բանալ զբերանդ և բարբառել զայն, զոր սիրէ Աստուած»:

Խրատ Թաթլոյ առ աշակերտ իւր Թովմաս հայր վանաց:

Տե՛ս նույն բանի 11 և 12 երեսները:

«Զի և ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ»:

Սիսիսնոսի լեպիսկոպոսի վարդապետի Ճառ ի սուրբ Քառասունսն, Կր. 9:

«Զի և շնորհքն Աստուծոյ անզեղք են»:

Նոյն, Կր. 57:

<ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ>

«Զի ևս տաց ձեզ բան (ուղղելի՛ բերան—Պ. Հ.) և իմաստութիւն»:

Ղուկ<աս>, ԻԱ, 14 (ուղղելի՛ 15—Պ. Հ.):

«...Զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք: Զի ո՛չ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ հոգին Հօր ձերոյ, որ խօսիցի ի ձեզ»:

Մատթ<էոս>, Ժ, 20—21 (ուղղելի՛ 19—20—Պ. Հ.):

«Որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ, զայն խօսիցիք, զի ո՛չ դուք էք, որ խօսիցիքն, այլ Հոգին Սուրբ»:

Մարկ<ոս>, ԺԳ, 11:

Բայց նախքան խնդրո առարկա բնագրի քննութեանն անցնելը, երկու խոսք քաղվածքները կատարելու թվականի վերաբերել:

Անշուշտ, մատենագրական այդչափ շատ աղբյուրներ, այդքան շատ րնագրեր, այն էլ միաժամանակ, Նախնական կարող էր ձեռքի տակ ունենալ, կարդալ, միմյանց հետ րազդատել և քաղվածքներ անել ավելի բարենպաստ պայմաններում, բանտից ազատվելուց հետո, 1865 թ. կեսից ո՛չ առաջ (երբ այդ րնագրերը պարունակող հրատարակութեաններից շատերը, մասնավորապէս, «Սոփեր հայկական» մատենաշարի հատորները, նա բերել տվեց Վենետիկից) և 1865 թ. նոյեմբերի վերջերից ո՛չ ուշ (երբ հարկադրված էր մեկնել աքսորավայր, Կամիշին): Հօգուտ դրա է խոսում նաև քաղվածքների ինքնագիր ձեռագրի հնագրական վերլուծութեանը: Այդպէս գրում էր Նախնականը կյանքի վերջին շրջանում: Զի բացառված, սակայն, որ քաղվածքները կատարված լինեն Կամիշինյան աքսորավայրում, կյանքի մայրամուտի օրերին, 1866 թ. հունվարից մարտի վերջերն ընկած ժամանակամիջոցում:

Մովսէս Խորենացու երկերից քաղված հատվածների համար սկզբնաղբյուր է ծառայել «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնք» (Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, 1843) ստվար հատորը, ուր ամփոփված են բերթողահոր ե՛ Հայոց պատմութիւնը, և՛ հարազատ ու երկբայելի, ինքնուրույն ու թարգմանական մյուս երկերը՝ «Պատմութիւն սրբոյն Հովսէփմեանց», «Յաղագս Վարդավառին խորհրդոյ», «Յաղագս Պիտոյից», «Աշխարհացոյց» (որոնց բոլորից էլ մեջբերումներ կան հրատարակվող

պատահականորեն)։ Ծիշտ է, Նալբանդյանի անձնական գրադարանում հիմա էլ պահվում է հորենացու Մատենագրության երկրորդ տպագրությունը (Վենետիկ, 1865), բայց քաղվածքների մի մասին ուղեկցող էջաձամարները համապատասխանում են այդ գրքի ոչ թե երկրորդ, այլ առաջինի հրատարակությանը։ Ասենք նաև, որ հորենացու Մատենագրության այս երկու հրատարակությունների մեջ ընդգրկված երկերն ու նրանց դասավորման կարգը նույնը լինելով՝ «անդերձ» բուն գրքերի շարվածքների մեջ որոշակի տարբերություններ կան։ Օրինակ՝ Պիտոյից գրքից առնված «Ցամենայն բարեացն յորդորմունս վաղվաղակի ժամանի» արտահայտությունը գտնվում է 1843 թ. հրատարակության ծիշտ և ճիշտ 502 էջում, ինչպես ցույց է տվել Նալբանդյանը, մինչդեռ 1865 թ. հրատարակության մեջ այն պիտի փնտրել 501 էջում։

«Պատմութիւն սրբոց Հոռիսիմեանց» երկից քաղված վկայություններից առաջին երեքը «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի հորենացոյ Մատենագրութիւնք», գրքի 1843 թ. հրատարակության էջ 297-ից են, իսկ շորորդը՝ հաջորդ 298 էջից։ Վարդավառի ճառից բերված վկայությունները՝ նույն հրատարակության 330, 331, 332, 336 և 337 էջերից։ Պիտոյից գրքից առնված քաղվածքներից շորսի էջերն արդեն նշել է Նալբանդյանն ինքը (346, 354, 479 և 502), իսկ հինգերորդը նույն գրքի 376 էջից է։ Աշխարհացույցից բերված միակ վկայությունը տե՛ս նույն տեղում, էջ 611։ Վերջապես Հայոց Պատմութիւնից քաղված արտահայտությունների աղբյուրները ցույց է տրված ըստ գլուխների՝ Բ. 65, Գ. 66, 68 (Նալբանդյանը նշել է՝ Գ, վերջ), բուն գրքում դրանք տե՛ս էջ 145, 269 և 274։

Միայն Մովսես Քերթոզին կամ հորենացուն վերագրվող «Կանոն Վարդավառին Առաջնոյ աւուր» շարականի տպագիր աղբյուրը նշված չէ, և մենք էլ դժվարանում ենք ճշտորեն մատնանշել։ Կամ Նալբանդյանը ձեռքի տակ ունեցել է շարակնոցի որևէ գրչագիր օրինակ, կամ տպագիրներից, թերևս, «Շարական հոգևոր երգոց սուրբ և ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց յօրինեալ» ժողովածուն, որ լույս է տեսել էջմիածնում, 1861-ին (տե՛ս էջ 450—455)։ Ծիշտ է, XIX դարի առաջին կեսին շարակնոցներն, ինչ-որ չգործված օրենքով՝ տպագրվում էին մեծ մասամբ Կ. Պոլսում օր.՝ 1802, 1815, 1820, 1826 և 1834 թթ., բայց հաղիվ թե դրանցից որևէ մեկը լինելու Նալբանդյանի օգտագործածը, որովհետև նրա գրադարանում Կ. Պոլսում տպագրված գրքերը պատահական հյուրեր են լուկ (ընդամենը հինգ տե՛ս)։

Հրատարակվող քաղվածքների ու հղումների մեջ այնուհետև հանդիպում են նյութեր մի երրորդ գրքից՝ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք» (Վենետիկ, 1840), որի մի օրինակը պահվում է Նալբանդյանի գրադարանում (ՄՆ Ն 23003)։ Դրանք թվով երեքն են և գտնվում են այդ գրքի 226, 378 և 424 էջերում, միայն թե սկզբում Նալբանդյանը ուղադրությունն է գրավել էջ 378-ի վկայությունը, ապա՝ 424, և վերջում՝ 226։ Ամեն անգամ աղբյուրը նշելիս Նալբանդյանը գրել է՝ «Նարեկ», մինչդեռ բուն Նարեկից կամ «Մատենան ողբերգութեան» պոեմից միայն էջ 226-ի օրինակն է. «Բան ինձ շնորհեա...» («Բան ինձ շնորհեա՛ ի յատենի բազմութեան...» ԶԵ, ա)։ Մյուսներից էջ 424-ինը՝ «Զօնեսցիք երգոյս բանի շնորհ» (բնագրում՝ «Նւարդ ձօնեսցիք երգոյս բանի շնորհ ի մաղթանաց ձերում հայցուածոց...»), Գրիգոր Նարեկացու «Ներբողեան գովեստի ասացեալ ի համօրէն գունդս առաքելոցն երկոտասանիցն՝ նախապատիւ պետութեանցն գլխաւորաց, և եւթանասուն և երկուց սրբազան աշակերտացն Քրիստոսի» երկից է (տե՛ս հատված Բ), իսկ 378-ինը լրացուցիչ բացատրության կարիք ունի Նալբանդյանը միայն նշել է. «Տե՛ս Նարեկ, եր. 378, անգեղջ են», բայց նրա օգտագործած գրքի նույն, նախորդ և հաջորդ էջերում տեղավորված է ո՛չ թե բուն Նարեկը, այլ Ապարանից խաչի պատմությունը, և «անգեղջ» բառն էլ 378 էջում ուղղակիորեն չի գործածված, այլ՝ անգղջակա՛նաց («Քանզի իբրև տեսին զնորո՛ պարգևացն անգղջականաց հրաշակերտ նշանից՝ ինքնակալին Յունաց... և այլն»)։ «Անգեղջ»-ը նոր բառ է և բացակայում է անգամ նոր Հայկազյան բառգրքում։ Գուցե հենց դրա համար էլ գրավել է Նալբանդյանի ուղադրությունը։ Ավելացնենք, որ բուն Նարեկում ես օգտագործված է «անգեղջ»

բառը, այն էլ կուսական ձևով (տե՛ս Մատենագրություն, էջ 163)։ «Կրկին վկայեալ անգեղջ գովեստիւ յորդեգրելոցն շնորհօք, ըստ բանին սրբութեան» (ԿԴ, Բ), բայց Նալբանդյանն այն կամ չի՛ նկատել, կամ էլ հարկ չի՛ համարել բաղնի։ Մնացած քաղվածքների սովոր մասը «Սոփերք հայկականք» մատենաշարի տարբեր հատորներից են։ Առաջներում, Նալբանդյանի գրադարանում պահվում էր «Սոփերք հայկականք» մատենաշարն ամբողջությամբ, հետևաբար և՛ Նալբանդյանի օգտագործած բոլոր հատորները։ Ներկայումս վերջիններից մնացել է միայն մեկը (ԺԹ), իսկ մատենաշարի 22 գրքերից՝ ազդիվ կեսը։ Ստորև աալիս ենք Սոփերքի վեց հատորներից առնված յոթ բնագրերի մատենագիտական նկարագրությունն ըստ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող օրինակների։

Սոփերք Հայկականք, Դ.—Յովհաննու Ոսկեբերանի և Գրիգորի Սարկազապետի ներբողեանք ի Ս. Գրիգոր Լուսաուորիչ, Վենետիկ, 1853։ Ոսկեբերանի Ներբողեանք տե՛ս էջ 3—125, Նալբանդյանի քաղվածքը տե՛ս էջ 5։ Սոփերք Հայկականք, ԺԱ.—Կորին վարդապետի Պատմութիւն սրբոյն Մեսրոպայ, Վենետիկ, 1854, էջ 5—37։ Նալբանդյանի քաղվածքը տե՛ս էջ 31։ Նույն հատորում.—Յիշատակ սուրբ հօրն Թաթևոյ, Վարդսի և Թովմասու (ցանկում՝ Բանք խրատու հօրն Թաթևոյ աշակերտին իւրում Թովմասու), էջ 47—59։ Նալբանդյանի քաղվածքը տե՛ս էջ 56։ Իսկ 11 և 12 էջերում համանման տողեր չկան։

Սոփերք Հայկականք, ԺԲ.—Սիսիանոսի հայոց վարդապետի ներբողեան ի սուրբ Քառասունսն, Վենետիկ, 1854, էջ 5—58։ Նալբանդյանի քաղվածքները տե՛ս ճիշտ և ճիշտ նշված տեղերում, էջ 9 և 57։

Սոփերք Հայկականք, ԺԴ.—Սրբոյն Ներսեսի Շնորհալույ պատմութիւն վարուց, Վենետիկ, 1854, էջ 1—87։ Նալբանդյանի քաղվածքները տե՛ս ճիշտ և ճիշտ նշված տեղերում, էջ 10 և 20։

Սոփերք Հայկականք, ԺԶ.—Պատմութիւն վարուց սրբոյն Սարգսի զօրավարի, Թորգմանեալ ի Ներսեսէ Շնորհալույ, Վենետիկ, 1854, էջ 1—53։ Նալբանդյանի քաղվածքը տե՛ս ճիշտ և ճիշտ նշված տեղում, էջ 40։

Սոփերք Հայկականք, ԺԸ.—Վկայութիւն սրբոյն Ատոմայ և որդւոյ իւրում, և Վարսայ և Ներսէհի և Վարձաւորին, էջ 69—82։ Նալբանդյանի քաղվածքը տե՛ս էջ 69—70։

«Սոփերք Հայկականք» մատենաշարի վերոհիշյալ գրքերը Նալբանդյանն օգտագործել կամ ընթերցել է խառը հաջորդականությամբ, նախ՝ Դ գիրքը, ապա՝ ԺԹ, հետո՝ ԺԱ, ԺԴ, ԺԶ, ԺԸ, վերջապես՝ ԺԶ և ԺԲ հատորները, որոնք բոլորն էլ վարքագրական ու խրատարանական փոքրածավալ բնագրեր են պարունակում։

Նալբանդյանի օգտագործած վերջին գիրքը՝ Նոր կտակարանն է, ավելի ճիշտ՝ նրա մեջ ամփոփված ավետարաններից երեքը. ըստ Ղուկասի, Մատթեոսի և Մարկոսի։ Բայց Նալբանդյանը ձևովի տակ է ունեցել ոչ թե Նոր կտակարանի որևէ առանձին հրատարակություն, այլ Աստվածաշնչի՝ Զոհրայան հրատարակությունը, որից, ի դեպ, նա քաղվածքներ է արել նաև բանտում, Պոռչյանի «Սոս և Վարդիթերի» վեպի մասին իր քննադատությունը, շարագրելիս և Ղազար Փարպեցու Թղթի ծանոթագրությունները կազմելիս։ Նորագիրն է. «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակաբանաց, ըստ

Ի նույն բառը (բայց առանց ածանցի)՝ դեղջ, Նալբանդյանն օգտագործել է Պերճ Պոռչյանի՝ «Սոս և Վարդիթեր» վեպի մասին գրած քննադատական հոդվածում (ավարտված է 1864 թ. փետրվարի 13-ին), որի իրեղեն ապացույցը այս արտահայտությունն է. «Մարդու զեղչն է գալիս, երբ տեսնում է, թե տասնումի տարեկան աղջիկը, ընկնելով իր սիրեկանի գիրկը և համբուրվելով նորանից՝ զոհում է, թե թոխաթ թիղ եղ է կանգնում նորա սրտին» (հ. 4, էջ 177)։ Եթե «անդեղջ» բառի իմաստն է՝ չղջացող, չփռչանող, անվերադարձ, ապա «դեղջ»-ինը հակառակն է՝ ցավ է գալիս, ցավալի է են։

ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն ընագրէ ի հայկականս բարբառ... յաշխատասիրութենէ տւեառն հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի», Վենետիկ, 1805: Այդ գիրքը (թե՛ նրա շօգտագործած օրինակը, որ ձեռք է բերվել 1865 թ. երկրորդ կեսին) պահվում է Նալբանդյանի գրադարանում:

Ի՞նչ հետևություններ է հանգեցնում մեզ քաղվածքների աղբյուրագիտական քննությունը: Սկսենք Մովսես Խորենացու երկերից:

Հայ հին ու միջնադարյան ձեռագրերում Մովսես Խորենացու անունով պահպանված երկերից միայն Հայոց պատմությունն է, որ հետազոտողներն անվիճելիորեն նրա աշխատությունն են համարում: Ստ. Մալխասյանցն, օրինակ, որ Մովսես Խորենացու գրական ժառանգության ամենահեղինակավոր հետազոտողներից է, Հայոց Պատմության իր աշխարհաբար թարգմանության առաջաբանում, թվարկելով պատմահոր անունով հայտնի մյուս երկերը, գրում է. «Երայց սրանք... կասկածելի են՝ իբրև անհարազատ գրվածքներ՝ Խորենացուն վերագրված» (Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Ե., 1981, էջ 21): Իսկ Մ. Արեղյանը մեկ առիթով, երբ դիմել է «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» երկին, ուրիշների նման ինքն էլ գործածել է «վերագրված» ակդիրը. «Մ. Խորենացուն վերագրված «Պատմութիւն Հռիփսիմեանց» գրվածքի մեջ...» և այլն (տե՛ս Երկեր, հ. է, Ե., 1975, էջ 131):

Եթե հեղինակավոր հայագետների տարակուսանքներն այսչափ անփարատելի են, բնական է, որ տատամսումներ է ունեցել նաև Մ. Նալբանդյանը, երբ ձեռնարկել է «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք» հատորի (Վենետիկ, 1843) ուսումնասիրությունը: Այդ գիրքը նա կարդացել է ամենայն ուշադրությամբ և, ինչպես կարելի է մակարերել քաղվածքներից ու համեմատություններից, հանգել է ուշագրավ հզրակացությունների, որոնք, սակայն, թղթին հանձնելու փոխարեն բավարարվել է լոկ փաստերը կամ ատաղձները դասդասելով: Այս վերջինների նորովի քննությունը բերում է այն հզրակացության, որ մի կողմից Հայոց պատմության, մյուս կողմից, իրարից անկախ վերցրած Վարդավառի ճառի և Հռիփսիմեանց պատմության մեջ կան ընդհանուր տեղիներ, այսինքն՝ բառացի կրկնված արտահայտություններ, նախընտրելի ոճեր, միևնույն հոգեվիճակի նկարագրություններ, որոնք հազիվ թե պատահական համընկնումներ լինեին կամ անճարակ բանաբաղություններ:

Վերցնենք հենց առաջին քաղվածքն ու հղումը. «Որում ոչ զոք կարծեմ ընդդիմանալ ի միտս ունողացն, էջ ա. համտի՛ր Պատմ. 14 եր. վերջին տողերի հետ»։—Այս վկայությունը խիստ ուշագրավ, կասեինք՝ զարմանալի անակրկալ է և ապացույց նրա, թե Մ. Նալբանդյանը որքան համակողմանի է իմացել հայոց հին մատենագրության և Խորենացու երկերի ընագրերը: Մեջբերված տողերը թեպետև քերականապես անհարթ են, բայց դժվար չէ կոահել, որ Նալբանդյանը ընթերցողին հղում է ո՛չ թե «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» երկը, որովհետև նրա օգտագործած գրքի մեջ այդ ընագիրը 14-րդ էջ չունի, առաջին էջից չի՛ սկսվում, այլ Խորենացու Մատենագրության 1813 թ. հրատարակության 14-րդ էջի վերջին տողերը, որոնք, սակայն, սկիզբն են Հայոց պատմության Ա գրքի 6-րդ (2) գլխի. «Յաղագս թէ է ինչ՝ որ հաւասար, և է՝ որ ժտար ի Մովսիսէ պատմեն այլքն հնախօսը, և յաղագս Ոլոմպիոդորա փիլիսոփայի անգիր <հին> գրուցացն»:

2 գլխի հենց առաջին պարբերության մեջ բառացի հանդիպում է Նալբանդյանի ուշադրությունը գրված արտահայտությունը: «2 հաւաստին որչափ կարացեալ ի բազմացն ընտրեալ բանիցն, կարգեցաք զծնունդս երից որդւոցն Նոյի՛ ցԱբրաամ և ցՆիհոսս և ցԱրայն (ուղղելի՛ ցԱբրամ—Պ. Հ.) առում ոչ զո՛ք քնդդիմանալ կարծեմ ի միտս ունողացն, բայց թէ զճշմարտութեանն ոք խորհելով քակէ զոճ, յառասպելս զճշմարիտ բանս ախորժելով փոփոխել փութայցէ. և յայտոսիկ իւրաքանչիւր միտք որպէս կամին՝ ուրախացին» (ընդգծումը մերն է—Պ. Հ.): Ավելացնենք նաև, որ Հռիփսիմյանց և Հայոց պատմությունների մեջ ո՛չ միայն բառացի կրկնվում է ընդգծված արտահայտությունը՝

«որում ոչ դոք ընդդիմանալ կարծեմ ի միտս ունողացն», այլև, թեթև խմբագրությամբ՝ հաջորդ բառերը. «Բայց միայն եթե որ ստույգան հաճեալ՝ զոճ պատմութեանս թակել ջանտացի»:

Որոշակի նպատակ է հետապնդում նաև Հոփսիմյանց պատմությունից տոնված հաջորդ արտահայտությունը. «Զի ևս մահկանացու գոլով, ծեր և հիւանդոտ...» և այլն: Խորհնացին իր տարիքի և առողջական վիճակի մասին, դրեթև միևնույն լատերով, խոսում է նաև Հայոց պատմության մեջ (Գ, կե). «Զի և ևս այր և՛ ծերացեալ և հիւանդոտ և անպարապ ի թարգմանութեանց»:

Վերջապես՝ Խորհնացին ինչպես այստեղ, նաև Հայոց պատմության մեջ, բազմիցս, վկայակոչում է Ագաթանգեղոսին, դարձյալ մոտավորապես նույն խոսքերով. «Անդ թարտուղարն Տրդատայ Ագաթանգեղոս» (Բ, կէ) և այլն:

Հոփսիմյանց պատմությունից Նալբանդյանի քաղած այս ևրևք հատվածները ոչ մի կասկած չեն թողնում, որ այդ երկն ու Հայոց պատմությունը նույն լեզվամաածողություն կնիքն ունեն իրենց վրա, գրված են համարյա միաձայնակ և եթե մեկը մյուսից փոխառություն չէ, որ բացառված է, ապա դրանք ևրկուսն էլ նույն հեղինակի մտքի արգասիքն են, ավելի պարզ՝ նույն Մովսես Խորենացու սակոծագործությունները:

Պիտի ափսոսալ, որ Նալբանդյանը հավաքելով համապատասխան ատաղձներ՝ չի հասցրել իր ևսբակացությունները թղթին հանձնել, մինչդեռ դրանք ծանրակշիռ նշանակություն կունենային հայ հին մատենագրության և Խորենացու ուսումնասիրության համար, չնայած ներկա վիճակում իսկ բանասերներին տրամադրում են ուղագրավ խորհրդածությունները:

Նույնպիսի նստատակի են ծառայում «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» երկից ու «Կանոն Վսրդավառին Առաջնոյ աւուր» շարականից հաջորդաբար մեջ բերվող քաղվածքները և Վարդավառի ճառի ու Հայոց պատմության մեջ պատահող համընկնումները. «Առագաստի ասել երգս», «Առագաստի երգեն ևրդս»:

Առաջինները կովաններ են ընձեռում ապացուցելու, որ Վարդավառի տոնի աղթիվ գրված և՛ ճառը, և՛ շարականը նույն հեղինակի գործերն են, իսկ վերջինները՝ Վարդավառի ճառի և Հայոց պատմության հեղինակի միանման ոճեր գործածելու հակումը, թերևս նաև՝ միևնույն անձը լինելը: Նշանակում է, Միքայել Նալբանդյանը Խորենացու անունով մեզ հասած երկերի ուսումնասիրության ընթացքում բացահայտել էր ընդհանուր այնպիսի տեղիներ, որոնք պիտի օգտագործեր իր եզրահանգումների համար, բայց գրելիքը թողնում է ապագային, երբ առողջական վիճակը կներեր բանասիրորեն ապացուցելու Խորենացու Մատենագիրության հատորում հավաքված երկերը նույն հեղինակին պատկանելու վարկածը:

Անդրադառնանք նաև Կորյունից, Խորենացու Հայոց պատմությունից և Աշխարհացուցից բերված վկայություններին, որոնց հետապնդած նպատակը փոքր-ինչ այլ է. դրանք կովաններ են ընձեռում ոչ թե բնագրագիտական հարցեր լուծելու, այլ հին Հայաստանի պատմական աշխարհագրության կնճիռները հարթելու համար: Դեռ բանտում, Ղազար Փարպեցու Թղթի աշխարհաբար թարգմանությանը կցվելիք ծանոթագրությունները պատրաստելիս, դրսևցից վեցերորդը և ամենարեղարձակը Նալբանդյանը նվիրում է նման մի հարցի՝ ծավալուն բանավեճի բռնվելով Մկրտիչ էմինի հետ (տե՛ս վերջին հրատ, հ. IV, էջ 325—334): Հայ պատմագիրներից բերած բազում օրինակներով Նալբանդյանը հաստատում է, որ Վաղարշապատը և Նոր քաղաքը միևնույն բնակավայրերն են, և էջմիածնի կաթողիկեն (Մայր տաճարը) կառուցվել է ոչ թե Նորքում, ինչպես գրել է էմինը, այլ Նոր քաղաքում, այսինքն՝ Վաղարշապատում²: Այս ծանոթությունը թղթին հանձնելիս Նալբանդյանը դեռ ծանոթ չի եղել Խորենացու վկայությանը (Պատմություն հայոց, Բ, կե), որը

² Նորքը Երևանի արվարձանն էր, Վաղարշապատից ավելի քան քսան կմ հեռու: Էմինի այդ սխալը Նալբանդյանը կամ չի նկատել, կամ հաշվի չի առել իրեն բացարձակ թուրիմացություն:

այդևգործություն, նույնպես էլ անասնապահության համար: Աշխարհացույցում էլ, Տայթի գավառները թվարկելուց անմիջապես հետո, ավելացված է. «Եւ յիսի ի Տայս թուզ և նուռն, աղտոր, սերկեիլ, պտղախունկ և նուշ» (Մատենագրությունը, էջ 610): Երեի թե՛ նալրանդյանին հետաքրքրած «աճեցմունքի» մի մասը հիշյալ պտուղներն էին:

Վարդավառի ճառից արտագրված վկայությունների վերջում և Պիտոյից գրքից առնված ոճերից առաջ (վերջիններս «յորդորմունք» բառի գործածման օրինակներ են) նալրանդյանը մատիտով նշել է եւ մի բառ «պարիզօտիցի» (ավելի ճիշտ՝ պարիզոտիցի): Ո՛րտեղից է բաղել և ի՞նչ նպատակով, դժվարանում ենք կասել: Մանավանդ որ Վարդավառի ճառում «պարիզօտիցի» բառը, որի բառարանային ձևը կլինեն՝ «պարիզօտիմ» (պարիզոտ հագնեմ), մենք կարողացանք դտնել: Այն գործածված չէ նաև խորենացու Հայոց պատմության մեջ: «Պարեգոտ» գոյականից կազմված բայական այդ ձևը չի արձանագրված նաև նոր Հայկազյան բառգրքում, հետևաբար այն («պարիզօտիցի»-ն), կարծում ենք, նալրանդյանին հետաքրքրել է իր հազվագյուտ լինելու պատճառով, որպես Միսթարյան գիտնականներին անծանոթ բառ:

Երկու խոսք էլ խորենացու Հայոց պատմությանն արվող վերջին հղման առիթով. «Սուրբ Սահակը Իւլքիիսէ», ապա և աղբյուրը՝ Հայոց պատմություն, Գ, կզ. «Իւլքիիսէ» տեղանունը, բնականաբար, խորենացու պատմության մեջ չկա, բայց տվյալ գլխի բովանդակությունը նույնն է. կաթողիկոսական աթոռից Ղևոնցվելուց հետո Սահակ Պարթեն ապրել է Բագրեանդում: Խորենացին այդ կապակցությամբ գրել է. «Թողեալ խարսխեաց յեկեղեցւոջն կաթողիկէ, որ ի Վաղարշապատ քաղաքի, ինքն կալով ի Բագրեանդ գաւառի, ի տեղւոջն, ուր ծագեալ յերկնոստ յոյսն ի մկրտել սրբոյն Գրիգորի դՏրդատ արքայ և զյուրոր Հայսս» («Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի խորենացւոյ մատենագրութիւնք», էջ 269): «Իւլքիիսէ» տեղանունը ինքյան ուշ միջնադարի ծնունդ է, և նալրանդյանն այն, անտարակույս, փոխ է առել Ղ. Ինճիճյանի «նոր Հայաստանից», ուր նկարագրված է նաև հիշյալ վանքը «Իւլ Էլիսա. մենաստան և եկեղեցի մեծ կոշեցեալ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, կառուցեալ ի լեւորին, որ ի հնումն կոչէր Նպատ, առ որով անցանէ Ծփրատ... Ի տաճկաց կոչի Իւլ քէլիսա. իբր ի նմանութենէ միւս Իւլ քէլիսային, այսինքն՝ էջմիածնի» և այլն (տե՛ս էջ 116):

Հակառակ խորենացու՝ Ղազար Փարպեցու Թղթում (որը հայտնաբերված լինելով 1820-ական թթ. վերջերին՝ առաջին անգամ տպագրվել է միայն 1853-ին), հանդիպում են պաբեգոտ բառից բարդված օրինակներ. «Քանդի պարեգոտաւօրք ազատեալ են ի Քրիստոս» և «զատույց զիս պարեգոտիւք», որոնք սակայն նալրանդյանին չէին կարող գոհացնել, որովհետև նախ՝ գոյականներ են և ոչ բայեր, և հետո, Թուղթն աշխարհարար թարգմանելիս՝ նալրանդյանը դրանք հետևյալ ձևով է մատուցել. «Որովհետև պարեգոտ հագնողները ազատված են Քրիստոսով» և «Իսկ ինձ աշխարհի ծառայությունից պարեգոտով որոշող և ազատության պատճառ եղողը Տեր Ազանն էր» (Մ. Նալրանդյան. Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով. հ. 4, Երևան, 1983, էջ 306): XIX դարի պարեգոտավորների մասին, մասնավորապես նրանց, որոնք Չամուռճյանի շրջանի մարդիկ էին, նալրանդյանն արտահայտվել է խիստ բացասաբար. «ՆԵ. Սուրբ Եղիշն վարդապետի վերաբերմամբ ՎՄՆԵ խոսքը նորը գրով տպեցինք՝ որոշելու համար պ. Չամուռճյանի պարեգոտավորներից, որոնք են՝ վանեցի Պողոսը, Տիրացու Հովհաննիսի Տեր Պապան և նոցա նմանները, որոնց անունները քաղցր չէ մեզ հիշել և որոնց հետ մասն և բաժին չունինք» (նույն տեղում, էջ 188): Նշանակում է՝ պարիզոտավոր և պարեգոտավորվել հասկացությունների մեջ նալրանդյանը բացասական իմաստ էր գնում, բայց թե՛ պարիզօտիցիմ հազվագյուտ ձևը մատենագրական ո՛ր աղբյուրում է հանդիպել, առայժմ մնում է հանելուկ:

НЕОСУЩЕСТВЛЕННЫЕ ЗАМЫСЛЫ М. НАЛБАНДЯНА

Доктор филол. наук П. О. АКОПЯН

Резюме

В архиве М. Налбандяна среди недатированных и нерасшифрованных рукописей сохранилось три листка, изучение которых выявило ряд выписок из оригинальных и переводных памятников древней и средневековой армянской словесности, общим числом 40 единиц. Приблизительная дата—не ранее осени 1865 года. Основная часть выписок—дословные цитаты, имеются также несколько ссылок и краткие заметки. Источниками послужили: «История Армении» Мовсеса Хоренаци; «Книга Хрий»; приписываемые Хоренаци «История св. дев Рипсимеян», «Слово о Преображении», «Шаракан» (духовная песня о преображении), «География»; «Жизне Маштоца» Корюна; приписываемый Давиду Непобедимому панегирик «Возвильте...»; ряд мелких текстов из отдельных томов научной серии «Соперк Айканк» («Армянские писания»); поэма Григора Нарекаци. М. Налбандян особенно стремился выявить те места текстов, в которых выражена общность авторского мышления и стиля. Это дает возможность утверждать, что ранее предположительно приписываемые Хоренаци тексты действительно принадлежат его перу. Налбандян интересовал также критерии художественности в восприятии древнеармянских книжников, вопросы исторической географии Армении, отдельные редкие слова, оставшиеся вне поля исследования венецианских мхитаристов—составителей Нового словаря гайканского языка.